# ՃԱՇԱԿ

## ՅԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՏԵՍԼԱՐԱՆԷՆ

## ՏԱՆԴԷԻ

### Հրեշտակն Աստուծոյ [1].

Եւ ահա գայր ընդ ալիսըն տըղմասին [2]
Շառաչման ահագնալից՝ դըղըրդածոյն,
Յորմէ ափունքըն սարսռէին երկաքանչիւր.
Ոչ այլազդ քան զմըրրիկ՝ որ դիւաշունչ
Փոթորկեալ ընդդիմադարձ տօթակիզմամբ
Հարու զանտառն, և անարգել ամենևին
Զոստըս ջախջախեալ տապալէ, վարէ զծաղկունս,
Յոխորտօրէն յառաջելով փոշիալից,
Եւ զգազանսըն խուճապէ և զանդէորդս:
Եղոյծ [3] զաչս իմ և ասէ. Կորովաբիր
Յառ՛ զակն ընդ փըրփրադէզըն վաղեմի՝
Ուրանոր ծուխն 'ի սաստկութեան առաւելու:
Հանգոյն գորտոց՝ որ ոխերիմ օձին հանդէպ
Ընդ ջուրսըն համափիւռ անհետանան,
Մինչև կուտել ամենեցուն մօրուան յեզատիւր,
Տեսի այսպէս ըզբիւրաւոր հոգիս եղծեալս
Յերեսաց խուսել միոյն՝ որ քայլելով
Ընդ ըզՍտիւքս անցանէր ցամաքընթաց:
Ի դիմաց ըզթանձրախիտ օդըն վանէր,
Զաջեակըն շարժելով յառաջ յաճախ,
Եւ 'ի նոյն թըւէր խոնջեալ լոկ յանձկութենէ:
Ծանեայ քաջ զի հրեշտակ էր նա յերկնից,
Եւ դարձայ առ Վարժիչն՝ որ ակնարկեաց
Կալ ինձ հանդարտ, և զի առ նա խոնարհեցայց:
Ո՛հ, քանի՛օն ինձ թըւէր լըցեալ ցասմամբ:
Եհաս առ դուռն, և նըրբենի գաւազանաւն
Եբաց զայն՝ որ ոչ եկաց ինչ հակառակ:
Ո՛վ վըտարեալ 'ի յերկնից ազգ արհամարհ,
Գոչէր կալաւ անդ առ սեմօքըն սոսկալի,
Ուստի՞ այդ տածի 'ի ձեզ այս ժըպրհութիւն.
Ընդէ՞ր հեստէք դուք վերըստին այնըմ կամաց,
Որոյ չմարթի երբէք լըրումըն գոլ թերի,
Եւ որ զաղէտըս ձեր յաւել բազում անգամ:
Զի՞նչ օգուտ կըքրել ընդդէմ ճակատագրին.
Կերբերոս ձեր յայտմանէ՝ թէ յիշէք քաջ,
Գիտախըռիւ դեռ ունի զուլն և ըզծընօտ:
Ապա դարձաւ յետս ընդ գայառուտըն ճանապարհ,
Եւ ոչ ասաց ինչ առ մեզ. այլ թըւեցաւ
Հանգոյն մինչ զայր հոգ այլ հապճեպ բուռն
[առնիցէ՝
Քան զայնմիկ որ իւրն իցէ հանդիպակաց:
Եւ ոտընփոխ մեք 'ի քաղաքըն գընացաք
Սըրբանուէր ըզկնի բանիցն աներկևանք:

ԴԺՈԽՔ. Երգ Թ. 64-105:

### Անձնասպանք.

Լըսէի [1] յամենուստ զողբոց կոծիւն
Եւ ոչ տեսանէի զոք ողբական,
Առ որ յոյժ պակուցեալ ըզկայ առի:
Կարծեմ թէ կարծեաց նա [2] զի կարծիցեմ
Եթէ ձայնքն յոլով ընդ բունսն արձակիցին
Յորերոյ՝ որք առ 'ի մէնջ կայցեն թաքուն:
Այլ սակայն Վարժիչն ասէ. Եթէ կըտրես
Ինչ շառաւիղս 'ի մի ընկոյզըս յայսցանէ,
Զոր խորհիսըն դու խորհուրդ՝ հատցի իսպառ:
Անդ սակաւիկ ըզձեռն յառաջ կարկառեցի,
Եւ բարձի ոստ մ'ի մեծաբերձ ժանտափըշոյ,
Եւ գոչեաց արմըն իւր. Հի՞մ զիս կորզես:
Ապա ուրեմն եղեալ յարիւն սևաթորմի,
Վերըստին գոչել կալաւ. Է՞ր զիս լըլկես.
Զի՞ցէ՞ քոյ բընաւին գութ գորովանաց:
Եղաք մարդիկ, և արդ եղեալ եմք ըստեղունք.
Քաջ իսկ պարտ էր լինել ձեռին քո կարեկիր
Թէ և հոգիք իսկ օձից եղեալ էր մեր:
Որպէս խանձող մի դալար որ այրիցի
Ի մի գըլխոյն, և 'ի միւսմէն հեծեծիցէ,
Եւ ճըչիցէ՝ յօդոյն 'ի բաց ելանելոյ.
Սոյնպէս 'ի սաղարթոյն խառն ելանէր
Արիւն և բարբառ, առ որ թողի
Զծայրն անկանել, կացեալ որպէս զայր մի երկ-
[չոտ:

1 Հասեալք երկոքին քերթողքն Վիրգիլ և Տանդէ ընդ քաղաքաւն Դիտէ, դիքն պահապանք դրանցն ոչ ներեն Տանդէի կենդանւոյ մտանել անդր. այլ հրեշտակ մի առաքեալ յԱստուծոյ՝ բանայ նոցա զդրունսն:

2 Ստիւքսեան Ճահճին:

3 Վիրգիլիոս՝ որ ձեռօք իւրովք փակեալ էր զաչս Տանդէի, որպէս զի մի տեսցէ նա զահարկու գլուխն Մեդուսայ:

1 Տանդէ է որ խօսի, հասեալ յերկրորդ պարուց դժոխոց ընդ Վիրգիլեայ, ուր են անձնասպանք այլափոխեալք 'ի ծառ:

2 Վիրգիլիոս: — Իտալերէնն տողս է
Io credo, ch'ei credette, ch'io credesse.

digitised by A.R.A.R.@

Թէ ինձ կանխաւ կարող եղեալ էր հաստատել
Խոցեալ հոգի [1], ած հանճարեղն իմ 'ի վերայ,
Զոր տեսեալ է զըլխովին 'ի նըւագս իմ,
Ոչ ձեռնամուխ առնէր 'ի քեզ զայն իւր բընաւ.
Այլ ինչ մ'ի վեր քան ըզմիտս յորդոր եղև
Շարժել ըզնա 'ի գործն՝ ընդ որ զինչ է և ինձ:
Այլ սաստ նմա ով ոք եղեր, զ'ի փոխարէն
Հատուցման՝ նորոգեսցէ զանուանդ հըռչակ
Յաշխարհ վերին, ուր դարձ առնել է իւր օրէն:
Եւ բուռն. Ա՛յնպէս ողոք բանիւք զիս հրապուրեա՝
Զի ոչ կարեմ կալ անբարբառ. և ծանրասցի
Մի քեզ՝ վայր մի բանիցս 'ի ձառ թէ յածիցիմ:
Ես այն եմ [2] որ ըզկըրկին կալայ փականս
Սըրտին Փրեդերիկեայ. և դարձուցի
Զայնս աղխելով և բանալով այնպէս մեղմիկ՝
Զ'ի գաղանեաց իւր գոգ ըզբնաւս 'ի բաց բարձի:
Հաւատարիմ կայ'ի պաշտօնըն մեծափառ
Ա՛յնպէս՝ զի կորուսի զքուն և զերակս [3]:
Վաւաշն [4] որ ոչ երբէք զաչըն յայրատ
Դարձոյց 'ի բնակութեանցըն Կեսարու,
Մահ ամենեցուն և՛ ախտ արքունեաց,
Գըրգռեաց ինձ հակառակ զոգիս բնաւից.
Եւ զըրգռեցին այնպէս զըրգռեալքըն զՕգոստոս [5],
Զի բերկրական փառձան պատիւքն 'ի սուգ տխուր:
Անձն իմ ծանրացաւումըն հաճութեամբ
Կամեցեալ խուսել մահուամբ յանարգանաց,
Արար ընդդէմ ինձ արդարոյս զիս անիրաւ [6]:
Ի կաճինըս նորաբոյս ծառոյս երդնում [1]
Զի զըտայ մինչ խոպառ հաւատարիմ
Առ Տէրն իմ՝ որ արժանին յոյժ էր պատուոյ:
Եւ թէ ոք 'ի ձէնջ յաշխարհ դարձ արասցէ՝
Ըսփոփեսցէ ըզյիշատակ իմ, տակաւին
Ընդ քարշ ածեալ 'ի հարուածոյն զոր ետ մախանք:
Վայր մի եկաց. Պուէտն ապա. Զի դա լըռէ,
Ասէ ցիս, մի ըզպատեհդ անցուցանէր,
Այլ խօսեաց և հարց ցընա՝ թէ կամիս այլ:
Եւ ես առ ինք. Դու ըզնա և եըս հարց
Զիրաց՝ զոր կարծես զոլ ինձ օգտաւէտ,
Զի ես չմարթիմ. այնչափ սիրտ իմ յուզեալ է յիս:
Անդէն յաւել. Զի արասցէ մեծահոգի
Մարդըն զայն՝ զոր աղաչանք քո թախանձեն,
Ոգիդ կալանաւոր, հաճեաց ուրեմն
Ասել դեռ ևս որպէս հոգին պարուրեսցի
Ի կոճեղըս յայսոսիկ, և թէ կարես
Պատմեա՝ երբէք թէ մի յոգիցս արձակիցի:
Յայնժամ շըչեաց ուժգինըս բունն, ուստի հողմոյն
Փոխեցաւ յայսօրինակ բանից բարբառ.
Կարճ'ի կարճոյ պատասխանի տացի առ ձեզ:
Յորժամ մեկնի 'ի մարմնոյ խեռեալ հոգի,
Յորմէ անձամբ զանձն իւրովի է անջատեալ,
Մինովս 'ի յալըըն եօթներորդ զնա առաքէ.
Անկանի 'ի մացառուտն՝ ուր չիք նըմա
Վըճռեալ վայր, այլ յով առնի բաղդըն վարեալ՝
Անդ բողբոջէ, որպէս ըզհատ մի ձաւարի:
Ամբառնայ յուղէշըըս տունկ մացառամոլ.
Ի սաղարդուցն ապա Արպեայք ճարակելով
Պատճառեն ցաւս և առնեն անցըս [2] ցաւոց:
Եկեսցուք հանդոյն այլոց առ մեր նըշխարս [3],
Սակայն ոչ թէ ըզգեցցի զայնս ոք 'ի մէնջ.
Զի ոչ արդար է զոր եբարձ ունել մարդոյ:
Աստ վայրաքարշ կացցուք նոքօք, և առ 'ի կախ
Մարմինք մեր յողորմ անտառն աղանիցին,
Մէն մ'ի բուն իւրոյ ստուերին աըւայտելոյ: —
Մեք դեռ ևս ունկըն կոճեղըն դընէաք,
Կարծելով թէ կամիցի այլ ինչ ասել.
Մինչ շաչիւն կալաւ ըզմեզ անակընկալ.
Համգունակ ում լըսելի լինի գալուստ
Վարազու և որսորդաց յիւր թաքըստոց,
Որ շականչէ զոստոց շառաչ և զերէոց:
Եւ ահա երկուք ոմանք յահեակ կուսէ,
Մերկք և ցըտեալք ձըրձիտ այնպէս յուժգին փախուստ,
Զի զանտառին ջախջախէին զուղէշան հոմայն [4]:

1 Այսինքն է՝ առ 'ի մէնջ թշնամանեալ, մորմոքեալ հոգի: Վիրգիլիոս 'ի յուշ ածէ աստ զանցս Էնէականին իւրոյ (Գիրք Գ. տող 40, և 'ի յաջորդն) յորում նկարագրեալ է անտառ մայրեաց բնակելոց 'ի մարդկեղէն հոգւոց:

2 Սա է Պետրոս Տէլլէ Վինէէ՝ կապուացի, քարտուղար Փրեդերիկեայ Բ՛ի, առ որում շնորհս յոյժ գտեալ՝ կարաց առնել նովաւ զոր կամեցաւն: Արքունականքն յաչակնոք՝ ամբաստանեցին զնա իբրև անհաւատարիմ արքունեացն գաղտնեաց, և զիւրահաւանն Փրեդերիկոս ետ կուրացուցանել զաչս նորա՝ առ որ ոչ կամեցեալ հանդուրժել՝ անձին արար, ընդ որմունս բանտին հարուածեալ զգլուխն: — Ընէըրէ կոլլոյ ֆոլոնոն՝ իմա փոխաբերաբար զհաւանելոյն և զչհաւանելոյն, զկամելոյն և զոչ կամելոյն:

3 Այսինքն՝ զկեանս: Եւ ասել կամի զի հաւատարմութիւն մեծ ունելով նորա առ Փրեդերիկոս՝ գրգռեաց ընդդէմ իւր զցասումն Կուսակրօնից և զնախանձ արքունականաց, որ և եղև պատճառ մահուն իւրոյ: — Ոմանք ընթեռնուն le vene e i polsi. այսինքն, 'ի չեէչ պաշտօն այնպէս (կացի հաւատարիմ) զի և զերակս [illegible]:

4 Վաւաշն, նախանձն պալատականաց, որ ոչ երբէք զհրապուրիչ և զանամօթ աչսն 'ի բաց կալաւ յարքունեաց:

5 Փրեդերիկոս Բ:

6 Ես արդարս՝ սպանի զիս յանիրաւի:

1 Ի նոր կեանս իմ երդնում:

2 Այսինքն՝ պատառուածս, ուստի անցանեն 'ի դուրս եղանեն ձայնքն ցաւալիք և հեծութիւնք:

3 Յաւուր աշխարհական ատենին:

4 Այսոքիկ հալածեալքն և կեղեքեալք 'ի շռայլ են անձնասպանքն առ վատնելոյ զինչս իւրեանց զեղխութեամբ:

digitised by A.R.A.R.@

Որ յառաջոյն· [1] Արդ հասիր, հասիր Օրհոս։
Եւ միւսն այն՝ [2] ում թըւէր յոյժ անագանեալ,
Աղաղակէր. Լանոս, ոչ այնպէս սրընթաց
Եղեն սրունքդ յարդնընկէց խաղըս Տօպպոյի։
Եւ զի թերեւս ոգիք շընչոյն պակասէին.
Ծրարեցաւ 'ի ծառատունկ մի միախառն։
Ըստ նոցանէ յարջնաթոյր քած չընուլին երամ
Լի էր անտառըն՝ սովատանջք, արշաւասոյր.
Որպէս բարակք այն ինչ լուծեալք թէ 'ի սա-
[րեաց։
Հարին անդ զատամունս ուր ծածկեցաւ,
Եւ յօշատեալ գիշատեցին պատառ պատառ.
Ապա տարեալ տարան զանդամըն ցաւատանջ։
Անդ կոչեալ 'ի ձեռանէս Առաջնորդն իմ,
Եւ էած առ ծառատունկն արտասուահեղ
Ի նանիր՝ ընդ պատառուածն արիւնահոս։
ԴԺՈԽՔ. Երգ ԺԳ. 22-129։

## Գերիոն [3].

Ահա խառնագազանն 'ի սուր տըտուն,
Որ անցանէ'նդ լերինս,հերձու զէնս և պարիսպս[4]։
Ահաւասիկ նա որ ժահահոտ առնէ զաշխարհ։
Այսպէս բանիցն ըսկըզբն արար Վարիչն իմ ինձ.
Եւ ակնարկեաց գալ 'ի գետափըն ձըւագան,
Մօտ 'ի սպառուած գեգերելոցըն վիմարդեայց[5]։

1 Մաեղն՝ ըստ Պոքքաչիոյի, պատանի սիենացի մեծաճոխ ժառանգութեան վիճակեալ, զոր խապառ վատնեաց 'ի սակաւ աւուրս և անկաւ 'ի ծայրագոյն աղքատութիւն։ Եղև 'ի թուոյ Սիենացւոցն որ 'ի 1280 գնացին յօգնութիւն Փլորենտիացւոց ընդդէմ Արետինեանց. և 'ի դառնալն 'ի Սիէնա՝ հարեալ զծառայութիւն, անկան յոբողայթ լարեալ յԱրետինեանց, մօտ 'ի Բիաւէ Տօպպոյի, ուր բազումք մեռան։ Լանոս՝ թէպէտ կարացեալ փրկել զանձն՝ այլ ոչ կամեցեալ հանդուրժել հեք և կարօտեալ կենացն, անկաւ 'ի մէջ թշնամեաց՝ պատառեալ մահու։ — Աստանօր արդն ըստ քննաբանից իմաստ և կիրս մեծ յաւելու 'ի բանն, ցուցանելով իմն եթէ յառաջնումն նուաղի 'ի զուր փութացաւ 'ի մահ, և այժմ յանհնարին տանջանս գոլով 'ի դէպ եա գոչէ, զի եթէ մարթ ինչ իցէ, հասցէ մահն և ազատեսցէ զնա։
2 Միւսն այն է Յակոբ 'ի Պատուիոնէ, ազնուատոհմ՝ Մաարանական Ս. Անդրէասայ կոչեցելոյ. և սա շուայտութեամբ իւրև զառաջինն սպառեաց զանբաւ ինչս իւր։ Ի մէջ այլոց տարօրինակ գործոցն պատմի և այս, զի յաւուր միում եա հրկիզել զմի յամարանոցաց իւրոց առ 'ի զուարճանալ 'ի տեսարան մեծի հրդեհի։ — Առ այպանել արդընընկէց խաղ ասէ զպայքարն յորում Սիենացիք խուճապեցան 'ի փախուստ։
3 Գազան ձիւաղ, կերպարան նենգութեան։
4 Կամի յիշեցուցանել զկործանումն Տրոյիոյ և զկոտորած 'ի ձեռն նուիրի խաբէական երիվարին։
5 Այսինքն է. յեզերս մարմարեայ ափանցն ուր շրջէին քերթողքն երկոքին։

Եւ զագին այն կերպարան խաբէութեան՝
Եկն և մատոյց ըզմըկանունսն և ըզգըլուխ,
Այլ ոչ եհան ըզագուտն 'ի վեր յեզըր գետոյն։
Երեսք իւր՝ էին երեսք առն արդարոյ.
Ըստ արտաքին տեսլեան այնպէս ազու էր նա,
Եւ օձի բովանդակ այլ մարմնոյն իրան։
Մազիլք կըրկին էին մազեղք իւր մինչ յանութ.
Լանջք և ողունք, և երկուստեք ազդեբքն և
[կողք
Ի հանգոյցըս [1] նըկարէին պատենաւորք։
Ոչ Թաթարք և կամ Տաճիկք ևս երփներանգ
Գործեցին ըզստորագոյց խորս և զելունդ.
Եւ կամ այսպէս յԱրաքնեայ [2] անկան ոս-
[տայնք։
Որպէս երբեմըն կարկուրայք կան առ ափամբ,
Որք կէս 'ի կէս 'ի ցամաքի են և 'ի ջուրն.
Եւ որպէս անդ առ Տեւտոնիքն որկորաժէտ
Կազմի կուղըն 'ի գուպարած իւրըն մարտի,
Սոյնպէս կայր գազարեալ զագին գազանն
Ցափնածիրն՝ ուր կըցի վէմն ընդ աւազն։
Ընդ այերս՝ ոչջոյն ըզտուտըն գալարէր,
Ըզշիթոց իւր թունալից 'ի գուրս ածեալ.
Որ ըստ կարճին նըմանութեան զինեալ էր սուր։
ԴԺՈԽՔ. Երգ ԺԷ. 1-27։

## Աւազակք.

Եթէ իցես, ընթերցող, ծանր 'ի հաւատալ
Զոր ասացից՝ չիցէ բնաւ ինձ զարմանալի,
Զի զոր տեսի հազիւ ընդ անձն իմ հաւանիմ։
Յորժամ 'ի վեր կալեալ էի զաչս առ նոսա,
Զառաջեօք ստանու միոյն օձ մի վեցոտն [3],
Եւ 'ի նա կըռուեալ մածնու բոլորովիմբ։
Կալաւ պընդեաց միջոյ ոտիւքըն զորովայնն,
Եւ ըզբազուկսն ոտնակառեաց վերնագունիւք.
Ապա եխած համանգամայն զայտսն երկոսին։
Ըզվերջինսն [4] առ ազդերօք տարածեցոյց.
Երկոցունցն 'ի միջավայր արկ ըզտըտուն,
Եւ 'ի վերջուստ ընդ թիկնամէջսն 'ի վեր ձըգ-
[եաց։
Ջեղև բաղեղըն խորարմատ երբէք այնպէս
Ըզծառով՝ որպէս վայրագըն քասքնելի
Ընդ անդամն եմոյծ այլումըն զիւրայինս։

1 Հանգոյցք ասելով կամի'իմանալ զփոքրիկ խաբէութիւնս, որովք շուրջ պատէ զայլս՝ նենգութիւն։ Պաքէանքն են՝ որովք ծածկէ զզաւն և զաղետաւոր գործս իւր։
2 Արաքնէ՝ կին անուանի ոստայնանկ, 'ի Լիւդիոյ՝ զոր փոխեաց Պալլաս 'ի սարդ։
3 Որ է Գիամփա փլորենտացի, յազգատոհմէ Գոնատեանց կամ Աբատեանց, որ ըստ Տանդէի այլափոխեալ 'ի գժոխս յօձ վեցոտանի՝ յարձակի և ընկխառնեալ նըյնաւորի ընդ Անգելեայ (Angelo Հրէշտակ) Պրունելլէսքեայ։
4 Այսինքն է՝ զվերջին ոտսն։

digitised by A.R.A.R.@

Յարեցան ապա յիրեար՝ որպէս թ՚էին
Ի ջերմ մոմոյ, և խառնեցան յերփըն իւրեանց,
Ոչ մին՝ ոչ միւս նոյն որ ինչ էրն այլ երևէր։
Զոր օրինակ առ պապիրուն [1] 'ի վեր բերի
Յառաջ քան ըղկիզումն երանգ մըթին՝
Որ չէ դեռ սեաւ, և ըսպիտակըն մեռանի։
Այլքն երկոքեան ակնարկէին և ձայնէին
Երկաքանչիւր. Վա՜յ ինձ Անգել, զիա՞րդ փոխիս.
Ահա արդէն իսկ ոչ մի ես, և ոչ երկու։
Վաղ իսկ էին զոյգ կառափունքըն միացեալ
Մինչ կըրկնախառըն կերպարանք երևեցան
Ի մի դէմս, ուր ջըփոթեալ երկուքն էին։
Եղեն երկու չորեքին բազուկքն 'ի չար.
Կողք ընդ սըրունս, և ընդ լանջաց կուրծս ո-րովայն,
Եղէն անդամք՝ որք ըընաւ չէն յակն անկեալք։
Բովանդակ նախկին տեսիլն եղծեալ էր անդ.
Երկակի և ոչ միակ թըւէր պատկերն
Այլ ընդ այլոյ, և մեղմընթաց այսպէս խա-ղայր։
Որպէս տխտեռն ընդ տօթակէզ տապախառնիւք [2]
Շընիկն աւուրց՝ տեղափոխեալ յորմած մի այլ
Շանթ զոգ կարծի, եթէ զուղին հատանիցէ.
Սոյնպէս թըւէր եկաւորեալ կըշիռ 'ի փոր
Այլոցն երկուց օձ մի փոքրիկ ահեղաբոց,
Լուրթ և սեաւ իբրև ըղհատ մի պըղպեղի։
Եւ ըզմասն՝ ուստ զառաջինն առեալ լինիմք
Ըզմեր սընունդ [3], խոցեաց միումն 'ի նոցանէ,
Յետոյ անկաւ հանդէպ նորին փեռնատարած։
Հայեցաւ 'ի նա խոցեալն այլ չասաց ինչ.
Քոչքօտէր նա մանաւանդ յիւրում կայի,
Իբր այն թէ նինջ՝ կամ տենդ ըղնա տագնա-պիցէ։
Հայէր նա յօձն, և նըմին օձն ակընկառոյց.
Մին 'ի վէրէն, միւսն ընդ բերանըն սաստկա-շունչ
Ծուխ տայր 'ի դուրս, և ծուխքն յիրեարըս դիմէին։

Լըռեսցէ արդ Լուկանոս՝ [1] անդ ուր խօսի
ԸզՍաբելլեայ տարաբաղդին, և զՆասիդեայ,
Եւ դիցէ ունկն 'ի լըսել զանձառս այժմիկ։
ԸզԿադմեայ, զԱրեթուսայ լռեսցէ Ովիդ [2],
Զի թէ զայն յօձ և զայս յաղբիւր այլափոխէ
Երգաբանեալ, ոչ ես ընդ նա բերեմ նախանձ.
Զի դէմ առ դէմ բնութիւնս երկուս ոչ փոխա-կեաց
Երբեք այնպէս՝ զի երկոքեանքն իսկ կերպա-րանք
Կայցեն կազմք 'ի փոփոխել ըղտարրս իւրեանց։
Զիրարեալ յարմարեցան այնպէս 'ի դէմ՝
Զի օձիկն յերկճիւղ ըղտուտըն փեռեկեաց,
Եւ հարուածեալըն պընդեցոյց զհետսըն [3] յի-րեար.
Սրունքն ընդ բարձըս իւրեանց այնպէս յօդեալ
Զուգեցան, զի փոքըր մի՝ և չերևէր
Ուրեք բնաւին նիշ և կամ հետք յօդաւորման։
Տուտն երկբայիկ 'ի վեր բերէր ըզկերպարան
Զանհետացեալն անդուստ 'ի միւսն, և կակղա-նայր
Խորխ մորթոյն, աստուստ միւսոյն 'ի կարծրա-նալ։
Տեսի զծըղիսըն մըջամուխ լինել դ՚ անթովք,
Եւ զերկուս ըզկարճառաւունըս գազանին
Երկայնել՝ որչափ զի միւսքըն կարճէին։...
Մինչդեռ ծուխն ըզսա և զնա քօղածածկեալ
Ի նոր երանգ՝ և հերս 'ի վեր բուսուցանէ
Ընդ մի մասն՝ ըզմիւսն յայնմէ մերկանալով.
Ի վեր եկաց մին, և անկաւ միւսն 'ի գետին,
Սակայն պիղծ յառեալ լուսովքըն [4] չարանենգ,
Դ՚որովք ըզդէմս մէն մ՚ի նոցուն յեղափոխէր։
Ուղղորդն՝ ընդ ծամելիս կոյս զայն [5] քարշեաց,
Եւ 'ի սաստիկ զեղմանց հիւթոյն որ հատ այ-դրէն՝
Ելին 'ի դուրս ականջք որինչք 'ի ծամելեաց.

1 Պապիրն յորժամ բորբոքիցի հրով՝ յառաջ քան զբոցն տեսանի 'ի նմա գոյն մթին՝ որ ոչ է սեաւ, և երանգն սպիտակ այլափոխի և ջնջանի. — Պապիրն էր նիւթ ինչ այրելի 'ի կանթեղունս փոխանակ բամբակի։ Այլք կարծեն եթէ կամիցի ասել զպապիրն Եգիպտոսի, ըծառն՝ յորմէ կազմէր թուղթ։

2 Իտալերէնն է Sotto la gran fersa de' dì canicular, զոր երկու եղանակաւ իմանան մեկնիչք. ոմանք զբառդ fersa ծագեալ համարելով 'ի լատին ferveo բայէն՝ որ է ասել այրեմ. եռամ. և զfersa հասարակ անուննն իմանալով աստէն ջեր-մութիւն, տօթ, և այլն։ Այլք ամին հակառակ զfersa համարին եդեալ փոխանակ sferzaի, որով կամին զի նշանակիցէ խարազան, և զի Տանդէի կամեցեալ իցէ ասել ընդ հրատապ խարազանաւ շընիկն աւուրց, 'ի մէջ բերելով եթէ ցայսօր 'ի կողմանս Փլորենտիոյ ասի la sferza del sole այսինքն է՝ խարազան ա-րևու։

3 Որ է պորտն։

1 Լուկանոս յԹ գիրս Փարսալիականին իւ-րոյ պատմէ զի Սաբելլոս մի 'ի զօրացն Կատոնի, յանցանելն ընդ Լիբիա հարեալ յօձէ զօդցես իմն յական քթթել սպառեցաւ և դարձաւ յաճիւն։ Եւ միւս ոք զօրական Նասիդիոս անուն խոցեալ 'ի քարբէ՝ այնպէս ուռուցեալ եղև՝ զի զրահիւն հանդերձ պայթեցաւ։

2 Ովիդիոս 'ի Դ գիրս Այլաբանութեանց իւ-րոց պատմէ զայլակերպիլն յօձ Կադմեայ որ-դւոյ Ագենորայ թագաւորին Փիւնիկեայ և հի-մնարկողի զԹեբէ։ Եւ 'ի Ե գիրս իւր պատմէ զայլափոխիլն Արեթուսայ յաղբիւր։

3 Փոխաբերաբար՝ է իմանալ զոտսն, յորոց միանալոյն կազմելոց էր տտուննն գազանին։

4 Այսինքն է՝ աչօքն։

5 Որ կայրն յոտին զցռուկն օձայլն յետաքար-շեաց առ ծամելիս (զի նմանեցուսցէ մարդկեղէ-նի)։ և 'ի լիութենէ հիւթոյն յորմէ կազմեալ էր և որ լցաւ անդ՝ այսինքն 'ի ծամելիսն, կերպացան և ելին 'ի դուրս ականջք։ Ի ճառաջանդոյն այն, այ-սինքն յաւելորդ հիւթոյն որ ոչ յետս քարշե-ցաւ, այլ եկաց 'ի միջին՝ արար ռնգունս։

digitised by A.R.A.R.@

Որ ոչ յետոյս ձըգեցաւ՝ այլ կաց 'ի նոյն,
Ընդդունես յերեսս 'ի մնացուածոյն այն յերիւրեաց
Եւ ըզչըրթունսն ըստուարացոյց ձահողակի:
Որ կայրն յորսայս յառաջ զերեսըն երկայնէ,
Եւ ամփոփէ ըզլըսելիսն առ կառափամբ,
Զոր օրինակ զեղջիւրսըն զիւր առնէ խըզունջն:
Եւ լեզուն՝ որ կից էր նախ և՛ երագասահ
Ի խօսել, ճեղքի յերկուս, և երկբացիկն
Ի միւսն անդրէն փակի, և ծուխն առնու դադար:
Հոգին որ էրն եղեալ գազան՝ շըշող սուլիւք
Ընդ հովիտըն ձորալիր գնայ 'ի փախուստ,
Եւ միւսն ըզհետ իւր խօսելով Թուքս արձակէ:

Դժոխք. Երգ ԻԵ. 46-137.

## Կոմսն Ուգոլին.

Մեք արդէն 'ի նըմանէ մեկնեալ էաք՝
Մինչ սառնամածս երկուս տեսի 'ի մի խոռոչ,
Որպէս զի գլուխ միոյն միւսումն էր գըլխանոց [1]:
Եւ որպէս հաց առ քաղցի կերեալ լինի՝
Սոյնպէս արկ վերինն 'ի միւսըն զատամունս,
Ուրանօր կըցի ուղեղն ընդ ծոծրակին:
Ոչ օրէն այլազգ Տիդէս [2] էառ կըրծել
Զիրանունս Մենալիպպեայ առ քինալըյն՝
Որպէս առնէր նա ըզկառափն և զայլն համայն:
Ո՛վ դու որ այդպէս վայրենի եղանակաւ
Ցուցանես ատելութիւն առ որ ուտեսդ,
Ասա զըխարդըն, յաւելի, զայս արկեալ սակ,
Զի յիրաւի թէ զնըմանէ հեծեծիցես,
Գիտելով ով դը իցես և զինչ մեղք իւր՝
Ես՛ս իսկ քեզ յաշխարհ վերին փոխատրեցից, [3]
Եթէ այս որով խօսիմս ոչ չորասցի:

Ըզբերանն առ 'ի վայրագ կերոյն 'ի վեր
Մեղապարտն այն հերով զայն սըրբելով
Գըլխոյն՝ զոր 'ի յետուստ էր խանգարեալ.
Ապա սկըսաւ. Կամիս դու զի նորոգել
Առից ըզցաւն յուսահատ, որ ըզսիրտ իմ
Գեղու արդէն 'ի խորհել՝ չև բարբառեալ.
Այլ թէ բանքս ունին լինել սերմըն ծընող
Կեղտ անուան՝ առ որ կըրծեմըս նենգագործ,
Խօսել և լալ տեսանիցես յիս հասարակ:

1 Գլուխ միոյն կայր 'ի վերայ գլխոյ միւսոյն իբրև թէ լինէր գլխանոց:

2 Տիդէս կալիդոնացի և Մենալիպպոս Թեբացի անհնարինս մարտուցեալք ընդ միմեանս առ պարսպօք Թեբէի՝ մահացու վիրաւորեցին զմիմեանս: Տիդէս յետ մեռանելոյն Մենալիպպեայ գեռ ևս կենդանի գոլով՝ ետ բերել զգլուխ նորա և առ սաստիկ զայրութիւն սկսաւ կրծանել:

3 Եւ ես հատուցից քեզ փոխարէն յաշխարհի, եթէ լեզու իմ որով խօսիմս և խոստանամ վատանուն առնել զթշնամին քո՝ ոչ չորասցի մեռանելովս:

Ոչ գիտեմ ով ես դու, և կամ զիա՞րդ
Եկեալ այսր 'ի ստորինս. այլ հաւատեաւ
Փլորենտացի ինձ թըւիս մինչ կամս 'ի լուր: [1]
Պարտիս գիտել զի եղէ ես կոմսն Ուգոլին [2],
Եւ սա ինքն արքեպիսկոպոսն Հռուգերոս.
Արդ ասացից քեզ առ իմ այսպէս կամս ընթեր.
Զի յարդիւնըս չարանենգ իւր խորհըրդոց
Վըստահացեալ առ նա իցեմ լեալ ձերբակալ.
Եւ ապա կենազըրկաւ՝ չէն պէտք ասել:
Սակայն որ ոչըն լըսելի քեզ մարթի գոլ,
Այն՝ թէ քանի՛ անողորմ մահ իմ եղև,
Լուիցես, և թէ զըզուեաց զիս՝ իմասցիս:
Լուսամուտ դոյզն 'ի ներքոյ հաւալոցին,
Որ ըզմովու յորջորջանս ինև կըրէ,
Եւ յոր հարկ է զի փակեսցին այլք ևըս դեռ,
Ինձ ցուցեալ էր արդէն լուսինըս շատ
Ընդ անցըս իւր՝ մինչ չարաշուեր տեսի երազ [3]
Որ եհերձ ըզպատրուակ ինձ ապառնեոյն:
Սա թըւէր առաջնորդ և ոստիկան
Հալածելով ըզգայլըն 'ի լեառն և ըզկորիւնս՝ [4]
Որով Պիզեանց ըզԼուկա չէ մարթ տեսանել:
Վըտտելովք [5] փութկոտ և վարժ ասպականեաւ
ԸզԳուալանդիս ընդ Սիզմոնդեայ և Լամֆրանկեայ
Յառաջ եդեալ էր Ճակատուն 'ի հանդիպոյ.

1 Այժմիկըն՝ խօսից քոյ. մինչ լսեմ զբարբառել քո:

2 Կոմսն Ուգոլին Գերարտեան (Տէլլա Կէրարտեսքա) գլուխ հերձուածոյ 'ի Բիզա յամին 1288 հալածեաց անտի օգնութեամբ Հռուգիերեայ զթոռն իւր զՆինոս՝ առաջնորդ հակառակ հերձուածոյն, և կալաւ զտեղն նորա կոչեցեալ զանձն կոմս Պիզայի (Բիզայ): Այլ ապա Հռուգիերի համբաւեալ եթէ Ուգոլին սակ արկանիցէ Փլորենտացւոց վաճառել արծաթոյ զքանի մի դղեակս Պիզայ՝ – որ ոչ յայտ հաւաստի է 'ի պատմութենէ – գրգռէ զժողովուրդն ընդդէմ նորա, և ձեռնտուութեամբ Գուալանդեայ, Սիզմոնդեայ և Լամֆրանկեայ՝ ազատազարմ գերդաստանաց Պիզայի և այլովք ժողովրդովք կալաւ իբրև մատնիչ և արկ որդւովքն և եղբօրորդւովք յաշտարակն Գուալանդեայ. և յետ վեց ամսոց ետ արկանել զբանալիս այնորիկ յԱռնոյ գետ, որպէս զի մեռանիցին 'ի սովոյ:

3 Մեծաւ արուեստիւ մտածեալ է այս երազ 'ի Տանդէէ, որով կոմսն Ուգոլին իմանայ զմօտալուտ աղէտս իւր և անհետ լինի 'ի նմանէ ամենայն յոյս:

4 Սա՝ զոր կրծեմս՝ թուէր ինձ գլուխ և առաջնորդ բազում ամբոխի որք 'ի հալածել կային զգայլ մի հանդերձ կորեամբ իւրով 'ի լեառն Ս. Ցուլիանոսի, որոյ վասն Պիզացիք ոչ կարեն տեսանել զԼուկա (Լուքքա). քանզի այդ լեառն ընդ մէջ կայ երկոցունց քաղաքացդ:

5 Այսինքն է՝ սովալլուկ, փոյթեռանդն և քաջամարզիկ շներամբ: Ի գայլն և 'ի գայլակորիւնս իմանալի է զկոմսն Ուգոլին որդւովք իւրովք, և 'ի շներամն՝ զամբոխ Պիզացւոց:

digitised by A.R.A.R.@

Ի սուղ ընթացս երևէին վտատակարեկք
Հայրն և խոշտանք, և թուէր ինձ տեսանել
Սայրասուր ժանեօք նոցուն ճեղքել ըզկողս.
Մինչ զարթեայ քան զայգուն լինել կանուխ՝
Լուայ ըզլալ 'ի նինջ քընոյն որդւոց իմոց
Որ ընդ իս էին 'ի մի, և խընդրել հաց։
Ցո՜յժ անգութ ես թէ քեզ արդէն իսկ ոչ ցաւէ
Ի խորհել որ ինչ 'ի սիրտ իմ ազդէր գոյժ.
Եւ թէ ոչ լաս՝ զիմ՞ 'ի լալ հարկանիցիս։
Զարթուցեալ էին արդէն, և անցանէր
Ժամըն սովոր առբերելոյ մեզ ուտելոյն,
Եւ ընդ երազ իւր վարանէր մէն մի 'ի մէնջ։
Եւ ես լուայ աղխել ըզսեանն առ ըստորև
Ահաւոր աշտարակին. զ' որ հայեցայ
Յերեսըս որդեկացս անշարժ իսպառ։
Ոչ լայի ես, այնպէս կայի յիս սառուցեալ.
Լային նոքա. և Անսելմիկն իմ ասէ ցիս.
Ա՛յսպէս դու հայիս հայր, և զի՞նչ է քո։
Համայն ո՛չ լացի, և ոչ պատասխանի
Արարի՝ զայն օր 'ի բուն և զցայգն ընթեր,
Մինչև միւս արեգակն յաշխարհ ծագեաց։
Այն ինչ դոյզըն ճառագայթ մուծաւ 'ի ներքս
Յարգելանըն ցաւագին, և ես տեսի
Ընդ կերպարանըս քառեակ զիմս իսկ տեսիլ։ [1]
Զերկոսին ձեռս առ վըշտիս խածատէի.
Եւ նոքին՝ թէ առնիցեմ զայդ կարծելով
Ի կամաց ուտելոյ՝ յարեան իսկոյն
Եւ ասացին. Հայր, յոյժ նըւազ լիցի մեզ ցաւ
Եթէ զմեզ կերիցես դու. դու զգեցուցեր
Զեղկելի մեզ զայս մարմին, և բարձ դու ինք։
Հանդարտեցի յայնժամ, զի մի և՛ս տըրտմեցին.
Զօրըն զայն և զմիւսըն լուռ կացաք իսպառ.
Ա՛յ կարծր երկիր, առ իմ՞ ոչ պատառեցար։
Մինչ ապա 'ի չորրորդըն հասաք օր
Գադդոյ անկաւ առ ոտիւք իմովք տարած
Ասելով. Հա՛յր իմ, ընդէ՞ր ոչ օգնես ինձ.
Անդրէն մեռաւ, և որպէս դու զիս տեսանես,
Տեսի զերիցն ես անկանել մի 'ստ միոջէ
Ընդ հընգեակ տիւն և վեցերորդ. ուստի սկը-
[սայ
Արդէն կուրըս խարխափել զմիով միով
Զօրս և երիս կոչեցի նոսա յետ մահուն.
Ապա քան զցաւն առաւել քաղցն եղև կարող [2]։
Ասացեալ խոժոռ աչօք կալաւ անդրէն
Ըզկառափն ողորմ՝ հարեալ անդ զատամունս,
Որք պընդակազմք առ ոսկրն եղէն իբրև ըզշան։

Դժոխք. Երգ ԼԲ. 124-139, ԼԳ. 1-78։

## Արուսեակն.

Իշխանապետն աղխողորմ արքայութեան
Ամբառնայր միջով լանջաց ընդ սառնակոյտն.
Եւ ընդ հըսկայ մ'ես առաւել համեմատիմ՝
Քան թէ հըսկայք ոչ ընդ իւրոյն են ընդ բազկաց։
Տե՛ս աղէ, ո՛րչափ լինել է բոլորին
Ի պատշաճել հանգունատիպ մասնականին։
Թէ գեղանի՝ որքան անգեղն է արդ՝ եղև,
Եւ ակնարկեաց յոնիւք ընդդէմ իւր Արարչին,
Քաջ իսկ յիւրմէ պարտին բըղխել սուգք ա-
[մենայն։
Ո՛հ, քանի՜ թուեցան ինձ մեծ զարմանալիք
Յորժամ երիս տեսի երեսս 'ի գլուխ իւրում,
Մին 'ի հանդիպոյ՝ որ էր կարմիր.
Այլքն երկուք՝ [1] որք ընդ սըմին յարակցէին,
Կըշխռ 'ի միջակէտ երկուցն ուսոց,
Եւ զօդէին ցըկատարած մինչ 'ի գագաթն.
Աջն ինձ թուէր յերանգ՝ ընդ շէկն և ըսպիտակ.
Ահեկինն 'ի տեսանել էր այնպիսի՝
Որպէս գան ուստի Նիլոսըն հովտանայ։
Ընդ մէն միով ձըգէին զոյգ թևք մեծամեծք,
Այնքանոյ թըռչնականին համապատշաճք.
Չտեսի երբեք ես առագաստ հանգոյն 'ի ծով։
Չունէր փետուրս՝ այլ ըստ ոճոյ չըղջիկանի
Կերպացեալ, և ծածանէր զայնս հողմթև.
Որպէս զի երից հողմոց շարժել 'ի նոյն։
Անդ Կոկիտոս պաղեալ սառնոյր համաբոլոր։
Լայր վեցեքին ականողեօք, և յերրեակ ծնօտս
Հեղոյր արտօսր, և ապաժոյժ արիւնազանգ։
Ցանձնիւր բերանըն մեղաւոր զոք ատամամբք
Ծանծաքէր, ըստ սանտերաց օրինակի,
Իբրև զ'ի նոյն չարչարակիցս առնել երիս։
Խածատիւնն՝ առ ցըրտելով թուէր ոչինչ
Վասն առաջնոյն, մինչ զի երբեմըն թիկնա-
[մէջքն
Ի մորթոյ կապտեալ իսպառ մերկանային։
Հոգին վերոյ՝ որ մեծագոյն կըրէ տանջանս,
Ասաց Վարժիչըն, է Յուդա ըՍկարիովտ՝
Որ ըզգըլուխն ունի ներքոյ, սըրունս 'ի դուրս։
Յայլոց երկուց որ ըզգըլուխ ունին 'ի ստոր՝
Որ կայն 'ի կախ 'ի սեաւ ցըռւկէն՝ Բրուտոս է
[նա,
Տե՛ս զի՛արդ յինքըն գելու, և չասէ բան.
Եւ միւսն այն՝ է Կասսիոս, յոյրն 'ի տեսիլ։
Սակայն դարձ առնէ գիշեր, և ժամ է արդ
Մեկնելոյ, զի և տեսաք իսկ զամենայն։

Դժոխք. Երգ ԼԴ. 28-70։

1 Ասել կամի՝ և ես տեսի ընդ քառեակ դէմս որդւոցս արդէն իսկ 'ի բնէ նմանք հօրն իւրեանց՝ և զնմանութիւն ցաւագին և հիւծեալ երեսացս։

2 Այսինքն՝ եթէ 'ի ցաւոց սրտիս ոչ մեռայ, այլ առ քաղցի հարկ եղև ինձ ուր ուրեմն մեռանել։

2 Ոմանք՝ յայլոյն էջնող. — Երեքին երեսքն նշանակք են երից մասանց աշխարհի ծանօթից յայնժամ, յորոց հոգիք տեղան յարքայութիւնն խաւարի որում իշխէ նա։ Կարմրագոյն են երեսօք Եւրոպացիք, ընդ շէկն և սպիտակ՝ Ասիացիք, և սեաւ՝ Ափրիկեցիք։

digitised by A.R.A.R.@

## Սորդէլլոյ.

Այլ տես [1] զի անդ հոգի մի պէշ ակընկառոյց
Մենաւոր միայնացեալ առ մեզ հայի.
Նա ուսուսցէ ըզճանապարհն երագընթաց:
Եկաք առ նա. Ո՛վ հոգիդ լոմբարդացի [2]
Եւ որպէս կայիր խըրոխտ և անարգու,
Այլ ցածուն և լուրջ յուշացդ ակնարկութիւն:
Նա անխօս ամենևին չասէր մեզ բան,
Այլ թողոյր խաղալ յառաջ. հայելով լոկ
Իբրև զառիւծ՝ յորժամ նըստեալ դադարիցի:
Սակայն Վիրգիլ մատեաւ առ նա աղերսագին,
Զի ցուցցէ զընարելագոյն ելըն 'ի վերել:
Եւ ոչ ետ պատասխանի խընդրըւածոցն,
Այլ հեհարց ըզհայրենիս մեր և ըզկեանս.
Եւ առաջնորդըն քաղցրագին՝ ըսկըսանէր
Մանտուա,… և ոգին այն մեկուսացեալ
Առ նա 'ի վեր ել 'ի տեղւոյն ուր կայրն յառաջ.
Ո՛վ Մանտուացիդ, ասելով՝ ես Սորդէլլոյ [3] եմ
Ի քոյդ երկրէ. և խառնէին գիրկըս միմեանց:
Ա՛յ ըստրուկդ Իտալիա, տուն աղէտից,
Նաւ անառաջնորդ յամպրոպս ալեաց,
Ոչ աշխարհաց իշխանուհիդ, այլ բոզանոց:
Հոգին ազնիւ այնպէս գըտաւ յորդորամիտ
Ի քաղցրաձայն միայն հընչիւն իւր աշխարհին
Առնել քաղաքակցին սէր անդանօր,
Եւ արդ այժմիկ չեն անկըռիւ առանց խազմից
Որք կեանն 'ի քեզ, և ըզմիմեանըս խածատեն,
Զորս համայն պարուրէն նոյն պարիսպք և
[փոսք:
Հայեաց թըշուառական յափունըս շուրջ
Ըզծովեզերբքդ, և տես 'ի ծոցդ ապա թէ գո՞յ
Մասն ուրեք 'ի վայելել զանդորրութիւն:
Ո՞ր օգուտ զի ուղղեաց ըզսանձ քոյին
Յուստինիան [4], եթէ իցէ թամբն ամայի,
Յորմէ զերկ՝ ոչ մեծ լինէր յոյժ քոյդ ամօթ:
Ա՛յ որեար, ոյց պարտ էր գոլ բարեպաշտօն
Եւ թողուլ զի նըստիցի Կեսար 'ի թամբ,
Թէ իմանայք քաջիկ զոր Տէր ձեզ առնէ յայտ:
Տես զիա՛րդ գազանս այս լեալ է ապիրատ
Առ չըլինելն առաջնորդեալ ընդ խըթանօք,
Յորմէ հետէ արկեր ըզձեռն յերասանակ.
Ո՛վ Ալբերտոս [1] գերմանացիդ՝ որ լըքանես
Ըզսա որ լեալս է աննըւաճ և վայրենի,
Եւ պարտէիր աշտանակել 'ի նիւս նորին.
Վըճիռ արժանագոյն անկցի յաստեղց
Յարիւն քոյին՝ և լիցի նոր և հաւաստի,
Զի և յերկիւղ ըմբըռնեսցի քոյդ պայազատ:
Քանզի դու և հայր քոյին հանդուրժեցիք
Յանկութեամբ վառեալ այդրէն [2] ընդլայնելոյ,
Զի պարտէզըն կայսրութեան ամայասցի:
Ե՛կ տեսանել ըզՄոնտեկեանս և զԿապպելլեանս,
ԸզՄոնալտիս և զՓիլիպպեանս [3], այր անխը-
[նամ.
Այնք տըկարք, և այսոքիկ կասկածագինք:
Ե՛կ անողոք, էկ տես զընկճումն հարըստահար
Քոց ազատաց, և աղէտիցըն տար դարման,
Եւ տեսցես ըզԾաղկասուրբն [4] որպէս է 'նքոյթ:
Ե՛կ տեսանել ըզքոյդ Հըռովմ՝ որ միայնակ
Լայն այրի, և գոչէ զտիւ և ըզգիշեր՝
Հի՞մ չըլինիս, իմըս Կեսար, ինձ ձեռընտու:

1 Վիրգիլլիոս է որ խօսի առ Տանդէ, հասեալ նոցա 'ի Մաքրարանի առ չորրորդ ազգ անհոգաց՝ որք պարապեալ զինուց, դպրութեան կամ քաղաքական վարչութեան՝ անփոյթ եղեն զկրօնական պարտուց իւրեանց և թողին 'ի վերջին աւուրս կենաց:

2 Զայնարկութիւն է այս քերթողին: Խրոխտ և անարգու, այսինքն այնպէս՝ որպէս արհամարհէ ոք մեծանձն հոգւով զանարգ և զնուաստ իրս:

3 Սորդէլլոյ եկաց մեծանուն բանաստեղծ քերթող յԺԳ դարու, որոյ 'ի սիրալիր դրկախառնութենէն ընդ Վիրգիլեայ պատճառս առնու Տանդէ ցաւով և զայրացմամբ սրտի երգիծանել զպառակտեալ և զանկարգ վիճակ Իտալիոյ, յորում քաղաքացիք ատէին զմիմեանս և ջգնէին 'ի կործանումն իրերաց:

4 Նմանեցուցանէ զԻտալիա երիվարի: Կայսրն Յուստինիանոս ազատեալ զԻտալիա 'ի Զ դարու 'ի Գոթաց 'ի ձեռն Բելիսարիոսի և ապա Ներսեսի հայազնոյ՝ հաստատեաց նորոգ վարչութիւն, արար մատեան օրինաց յիւր անուն կոչեցեալ, և ակն ունէր դարձուցանել զնա յառաջին փառս իւր. այլ ուղղեալ՝ այսինքն է կազմեալ, յարդարեալ զսանձ նորա, վերստին բարեկարգեալ զօրէնս. Թէպէտ և բազումք ձեռն արկին ունել զնա, այլ չէզև ոք քաջ 'ի սանձել և 'ի վարել զնա: Յորմէ զերկ՝ այսինքն է առանց օրինաց:

1 Ալբերտոս Աւստրիական՝ որդի Ռուտոլփայ Հաբսբուրգեան (Հաբէբրգունի), առաջնոյ կայսեր 'ի տանէն Աւստրիոյ, ընտրեցաւ 'ի կայսրութիւն յամին 1298 կամ 99, և ոչ կամեցաւ երբեք գալ յԻտալիա: Գուշակօրէն իմն ակնարկէ 'ի բուռն մահ Ալբերտեայ յեղբօրորդւոյ իւրմէ 'ի Յովհաննու Աւստրիական 'ի 1308: Սա այս Ալբերտոս ոչ կամեցաւ նպաստամատոյց լինել հալածելոց Կիպելլեանց, և աստի իցէ թերևս ցասումն քերթողին ընդդէմ նորա:

2 Այսինքն է՝ 'ի Գերմանիա կամելով միշտ ընդարձակել զիշխանութիւն տիրելով նորանոր տեղեաց, և թողլով զԻտալիա՝ պարտէզն կայսրութեան անապատասցի:

3 Առաջին երկուքն էն ազատական ազգատոհմք Կիպելլեանք 'ի Վերոնայ, և երկու վերջինքն յՈրվիետոյ նոյնպէս ազատ ազգատոհմք Կիպելլեանք:

4 Ծաղկասուրբն (Santafior Սանդաֆիոր) կոմսութիւն է 'ի Մարեմմա Սիենացւոց, հարկատու կայսեր, բայց յայնժամ առ անհոգութեան նորա և վասն վատթար վարչութեան կոմսիցն աղմկեալ և լի գողութեամբ, վասն որոյ ընդ հեգն է ասելն՝ Տեսցես որպէս է անփոյթ: Ոմանք ընթեռնուն՝ Ո՛րպէս [illegible], Come si cura, և այլք ըստ եղելոյս՝ Com'è sicura.

digitised by A.R.A.R.@

Ն՛կ տեսանել ըղձարգիկ որպէս կան 'ի սէր.
Եւ թէ ոչինչ ըղջեղ 'ի գութ մեր շարժեացէ՝
Ըղձամքաւոյ անուանդ ապէ եկ ամաչել։
Եւ թէ իցէ՛ ինձ ներելի վենգ Եհովէ,
Որ վասըն մեր բևեռեցար յերկրի 'ի խաչ,
Իցէ՛ն դարձեալ այլուր արդեօք հայեացքդ պր- [գար։
Կամ պատրաստեալ թէ հանդերձես ինչ խոր- [հըրդոց
Քոց 'ի խորս առ մեր բարին, և արտաքոյ
Ամենևին առ 'ի մերմէ գիտութենէս։
Ո՛հ. յԻտալիա դ՛ երկիր համայն լի են բըռունք,
Եւ լինի Մարկելլոս[1] աք մէն մի գաւհիկ
Որ հերձուածոց ընկերշակել եկաւորի։
Փլորենտիայդ իմ, կարես հանձ լինել և գոհ
Ընդ խոտորումնս՝ որ ոչ 'ի քեզ ինչ ակնարկէ
Շընորհիւ ժողովըրդեանդ հանճարադիտա։
Բազումք զարդարութիւն կըրեն 'ի սիրտ,
Այլ յամր ստանու՝[2] առ ոչ նետող գոլ յան- [խորհուրդս,
Բայց ժողովուրդ քո կըրէ զայն շըրթանցն 'ի [ծայր։
Հրաժեշտ բազումք տան 'ի գործոց հասարակաց.
Այլ ժողովուրդ քո վաղվաղէ աանել անկոչ
Պատասխանի մեծաբարբառ՝ բամ՝ Ըստանձ- [նեմ։
Արդ ուրախ լեր, զի և մարթիս իսկ իրաւամբք.
Դու մեծաձոխ, դու յանդորրու, դու իմաս- [տուն.
Թէ զըստոյգն ես բարբառիմ՝ արդիւնքն են [յայտ։
Աթէնք, Լակեդեմոն որ կարգեցին
Ըզհին օրէնս՝ և զարդացեալ գըտան այնպէս,
Ըզբարօրէայ կենաց կալան դոյզն ինչ նըշոյլ
Առ քե՛ որ այնչափ հայթհայթես մանր ըզպիտոյս,
Զի մինչ ցըկես նոյեմբերի ոչ գըտանի
Բաւական՝ զոր անկանես ընդ հոկտեմբեր։
Քանիցս անգամ՝ աւուրց յաւուրըս զոր յիշես,
Օրէնս, դըրամ, և պաշտամունս և սովորոյթ
Փոխեցեր և կարգեցեր անդամըս նոր.
Եւ թէ ուշ ունիս քաջիկ և լոյս հայիս,
Տեսցես զինքնդ հանգունատիպ տխտացելոյ՝
Ում ընդ փետուրս հանգիստ անմարթ է գը- [տանել.
Այլ աստի անդըր դառնալով զցաւըն մեղմէ։

ՄԱՔՐԱՐԱՆ. Երգ Զ. 58-151։

1 Այսու անուամբ եղեն արք բազումք ակա- նաւորք 'ի Հռովմ, յորոց մի է որ եռան զՍիրա- կուսա, և միւսն այն որ ընդդէմ եկաց բռնակա- լութեան Յ. Կեսարու։

2 Այս է՝ բազում զգօնամիտ քաղաքացիք և աստ և այլուր իմանան և կամին զարդարն, այլ նախ քան զառաջն վճիռ, յառաջ քան զդատաստան տանել զառանին և զհասարակաց իրաց՝ խոր- հին քաջ և ոչ ստտուցանեն զնետ յաղեղանէ՝ որ այլ ոչ ևս դառնայ, և այլն։

## Կոյսն Մարիամ և Տապանակն ուխտին[1].

Եկաւորեալն յերկիր զուարթունն աւետաբեր
Ցամայր ամօք արտասուելոյ խաղաղութեան,
Որ եբաց զերկինս յերկայն արգելմանց,
Առաջի իմ երևէր այնպէս ճըշգրիտ
Դըրօշեալ քանդակածոյ քարցր 'ի կերպի,
Զի ոչ թըւէր թէ անխօսուն իցէ պատկեր։
Մարթ էր երդնուլ զի բարբառել կայցէ զՈղջոյն.
Քանզի և Նա ինքն[2] անդանօր էր պատկերեալ՝
Որ 'ի պարզել ըզբանալըն վեհ զախտըն շարժեաց։
Եւ էին կենդանակերպ դրօշմեալ այս բանք՝
Ահաւասիկ աղախին Տեառն, ոչինչ ընդհատ
Քան ըզպատկեր կընքեալ 'ի մոմ տըպաւորեալ։
Սակայն ոչ 'ի մի ուրեք լոկ ունել ուշ,
Դաստիարակն ասաց քաղցրիկ, որ ունէր զիս
Ի կողմանէ ուստի ըզսիրտ կըրեն մարդիկ։
Առ այս՝ զերեսըս դարձուցեալ տեսանէի
Ի թիկանց Մարիամու, ընդ կողմն ընդ այն
Ուր մօտ էր նա առ իս որ ինձ լինէր շարժիչ՝
Դըրուագեալ այլ պատմութիւն 'ի խարակին,
Ուստի անցի ըզՎիրգիլեաւ և մատեայ մօտ
Որպէս զի լիցին աչացս յայտնատեսիլ։
Էր անդանօր քանդակագործ 'ի վէմն 'ի նոյն
Սայլն և եզինք ըզՏապանակըն սուրբ կրելով,
Ցոր խիթալի պաշտօն տանել չէ կոչեցեալ[3]։
Յառաջոյ թըւէր ամբոխ, և յեօթըն դաս
Հատուա զատեալ, և յըզգայնոցըս երկոցունց
Ասել միոյն տայր՝ Ոչ, միւսոյն՝ Այո՛ երգէ։
Ըստ նըմին օրինակի՝ 'ի ծուխ խընկոց
Որ կերպացեալն էր անդանօր, աչք և ռըն- [գունք
Ընդ ոչն և ընդ այո՛ երկմըտեցին։
Կարապետէր օրհնեալ արկեղն ընդոստ 'ի կայթ
Խոնարհ Սաղմոսանուագըն պարելով,
Եւ մեծ և ստոր[4] 'ի պայմանին էր քան զար- [քայ։
Ի հանդիպոյ նըկարակերպ կայր պըշուցեալ
Մեքող ընդ պատուհան մեծ ապարանաց,
Իբրև ըզկին արհամարհոտ և տըրտմալից։

1 Կող լերինն ընդ որ ելին 'ի վեր Վիրգիլիոս և Տանդէ՝ մարմարակուռ էր սպիտակափայլ և հրաշակերտ քանդակօք լի. և քանզի յայսմ տե- ղւոջ սրբին հոգիք հպարտից՝ վասն որոյ քան- դակքն այնոքիկ նկարակերպք էին օրինակք խո- նարհութեան, յորոց առաջինն և անձառելին է օրինակն Քրիստոսի։

2 Ս. Կոյսն Աստուածածին։

3 Յիշել աստ անակնկալ մահ Ոզայ՝ որով պատ- ժեաց զնա Աստուած վասն ձգելոյն զձեռն իւր 'ի տապանակն սուրբ յանկանել նորին։

4 Մեծ՝ քանզի խոնարհէր առաջի Տապանակին Աստուծոյ. և սուղ քան զարքայ՝ քանզի թագաւոր գոլով՝ այնպէս հակառակ մտաց աշխարհի նուաստանայր պարելովն։

digitised by A.R.A.R.@

Ոտն ածի 'ի տեղւոջէս յորում կայի
Տեսանել մօտ առընթեր զայլ պատմութիւն,
Որ 'ի բացէ քան ըզՄիքօլ լուսափայլէր։
ՄԱՔՐ. Երգ Ժ. 34-72։

## Առ հըպարտս [1].

Ո՛վ Քրիստոնեայք հըպարտք. թըշուառք, ողոր-մելիք,
Որ հիւանդք 'ի տեսութիւն մըտաց բանի
Յոխնձեմիք յընթացըս ձեր նահանջական. [2]
Ո՞չ տեսանէք և իմանայք զի. որդն եմք մեք
Ծընեալք ածել 'ի գոյ զթիթեռն հրեշտակային,
Որ թռանի յարդարութիւն անպատըսպար։
Առ ինչ միտք ձեր 'ի վեր 'ի վեր օդավարի.
Զի էք իմն անարդ բոստք թերակատար,
Իբրև զորդն անյօդաւոր 'ի կերպարան։
Զինչ 'ի վեր ունել ըզյորկ կամ զառաստաղ
Է' երբեք զի տեսանի մոյթ 'ի նեցուկ
Պատկերակերպ' ըզլանջ 'ի սրունսըն խոնար-հեալ.
Որ զըստոյգն յանըստուգէն զարթուցանէ
Անձկութիւն առ տեսողին. սըմին հանգոյն
Տեսի զայնս' ուշիւ զամ մի մանր եդեալ միտ։
Նըւազ կամ առաւել էին 'ի կոր
Արդարև' ըստ շատ կամ քիչ ըստանձնելոյն.
Եւ որ նեղէրըն մեծագոյնս յանձին իւրում,
Ասել թըւէր լալով. Ա՛յլ ոչ եւ հանդուրժեմ։
ՄԱՔՐ. Երգ Ժ. 121-139։

## Վերջք յերկրորդ պարունակն.

Առ մեզ դիմեալ գայր արարածըն գեղանի
Լուսափայլ պատմուճանաւ, և երեսօք
Որպէս դիտեմք զաստըղ շողշող առաւօտին։
Գիրկըս եբաց, և ապա եբաց ըզթևսն,
Ասաց' Եկայք. աստ առընթեր են աստիճանք,
Եւ արդ ուրեմն հեշտեաւ 'ի վեր ելանիցի։
Ի կոչումըն հրաւիրիս զան յոյժ սակաւք։
Ո՛վ ազգ մարդկան, ծընեալ 'ի վեր արփաթևել,
Հիմ աղէ 'ի դոյզն հողմոյ վայրաբերիս։

1 Մինչդեռ Տանդէ կայ հիացեալ 'ի տես քան-դակայն' և ահա գան հանդէպ իւր հոգիք ոմանք որք ընդ սաստիկ ծանրութեամբ բեռանց ճըն-շեալք քաւեն զմեղս հպարտութեան իւրեանց, որոց 'ի տեսիլ լի եռանդեամբ ձայնարկէ ընդդէմ հպարտից։

2 Ասել կամի' հարծէք զաչացու մտօք յառա-ջել և հասանել 'ի մեծ և 'ի բարի վախճան, և ոտնփոխք ձեր ընդհակառակն յետադնացք են և հեռացողք 'ի հասանելոյ 'ի վախճան բարութեան։

Էած զիս ուր ընդ երկու հատեալ էր լեառն.
Անդանօր եհար ըզթևսըն ճակատուս,
Ապա անշուշտ ըզճանապարհն ինձ խոստացաւ։
Զոր օրինակ յելըս լերին ընդ աջակողմն'
Ուր կանգնի եկեղեցին այն իշխեցող
Վարելոյն իմաստութեամբ 'ի Հաուբակոնտ [1]
Մեղմի թափ խիստ ելից' օժանդակաւ
Յօրինելոցն անդ սանդըղոց առուրցն 'ի պահ
Յոր կային տումար և չափ յապահովի [2].
Սոյնպէս հարթի ձեպն ապալէր սարաւանդեալ
Այդր 'ի միւս պարունակէն ապառաժուտ,
Բայց յըցուին աստ բարձունք խութք և անտի։
Յայն 'ի կողմ սըւեալ անձանց մերոց շըրջան'
Երանի՜ աղքատք հոգւով' ձայնք նըւագաց
Հընչեցին, որպէս զոր ոչ ճառեսցեն բանք։
Ո՜հ, որքան 'ի գեհենոյն են այլազգի
Այս ծերպք փոռեկք' ուր միջամուխ երգովք են մուտք,
Եւ անդր 'ի ստոր յահեղ ողբոց գերաշխարան։
Ընդ սանդուղըն սուրբ 'ի վեր ելանէաք,
Եւ թուէր ինձ գոլ յոյժ առաւել թեթևագին,
Որչափ ընդ դիւրըն յառաջնըմն թըւէր ինձ ոչ։
Վասն որոյ ես, Վարժիչ, ասա, զինչ ծանրութիւն
Բարձաւ յինէն, որպէս զի գրգ և ոչ մի
Աշխատութիւն յանձին կըրեմ արդ ընդ եր-թալըս։
Յորժամ Մեղք [3], կըրկնեաց անդէն, որք տակաւին
Ի դէմըս քո նըշմարին իմն անհետացեալ,
Լիցին որպէս ըզմին գերծեալք իսպառ,
Ի յօժար կամաց լիցին ոտք քո պարտեալք,
Որք ոչ միայն աշխատութիւն ոչ ըզգայցեն,
Այլ լիցի նոցին վայելք մըլիլ 'ի վեր։
Անդ արարի նոցին հանգոյն որք ընթանան
Ունելով ինչ մ' 'ի գլուխ' անգէտ յինքեանց,
Եւ կասկածեն միայն յայլոցն ակնարկելոյ.
Առ որ ձեռն 'ի հաւաստել օժանդակէ
Եւ խընդրէ և գըտանէ, վարեալ պաշտօն
Զոր չըմարթին տեսանելեօքըն հայթհայթել։
Եւ մատամբք անջըրպետեալ աջոյ ձեռին
Գըտի վեց միայն ըզտառսըն գըրոշմեալ
Ի կըողէն բանալեաց ընդ իրանունս։
Առ որ Վարիչն իմ հայեցեալ հարաւ 'ի ժպիտ։
ՄԱՔՐ. Երգ ԺԲ. 88-136։

1 Իմաստութեամբ վարեալ աստ հեգնու-թեամբ զՓլորենտիա, երգիծաբանել կամելով զվատթար վարչութիւն իւր։ Հաուբակոնտ կա-մուրջ է 'ի վերայ Առնոյ գետոյ։

2 Այսինքն է' սանդուղքս այսոքիկ կառուցան 'ի հին ժամանակս մինչ 'ի Փլորենտիա ոչ գոյր խաբէութիւն. և ասելովն տումար և չափ յապա-հովի կային' կամի յիշեցուցանել զերկոսին զմեծ խարդախանս և զգողօնս որք դիպեցան յաւուրս Տանդէի 'ի պետական մատակարարութեան։

3 Ի մտանել Տանդէի 'ի Մաքրարանն' դրոշ-մեաց հրեշտակ մի 'ի ճակատ նորա եօթն Մ. Նշանք եօթն մահացու մեղաց. մեն մի մեղաց էին

digitised by A.R.A.R.@

## Արծիւն Հռովմէական ¹.

Մինչ Կոստանդին զամ մի զարծիւըն հոլովեաց
Ընդդէմ երկնիցն ընԹացից ², յոր սըլացաւ
Հընոյն ³ ըզհետ ըզԼաւինիա վըտարողի.
Երկերիւր և աւելի ամօք եկաց
Թըռչունն Աստուծոյ յԵւրոպական կիրճ ⁴,
Մօտ առ լերամբքըն ⁵ յորոց նախ ել մեկնե-[ցաւ:

Եւ փետրոցն ընդ հովանեաւ սըրբանըւէր
Վարեաց զաշխարհ անդանօր ձեռաց 'ի ձեռս.
Եւ այսպէս փոխանակեալ հաս ընդ իմով:
Ինքնակալ եղէ և եմ Յուստինիան.
Եւ 'ի կամաց նախըն Սիրոյ՝ զոր յանձն ըզգամ,
Յօրինաց բարձի զունայնն և զԹարմատար ⁶.
Եւ քան 'ի գործն յառաջ լինելս իմ ուշակալ՝
Մի բնուԹիւն գոլ 'ի Քրիստոս, ոչ աւելի
Հաւատայի. և ընդ հաւատս այս կայի հաճ.
Այլ օրհնեալն Ագապիտոս՝ այն որ եղեն
Հովիւ գերագոյն՝ 'ի սեպըն կրօնս
Իւրովք բանիւք՝ որոց հաւատս ընծայեցի,
Ուղղեաց զիս. և որ զինչ բանք իւր էին
Արդ տեսանեմ պայծառ, իբրև զի տեսանես
Յառարկուածն համայն՝ զուղիղն և զանուղիղ:
Մինչ այն ինչ կալայ զընԹացս Եկեղեցւոյ
Կամեցաւ Տէր շնորհիւն իւր յիս շընչել
Ըզվեհ վաստակն՝ առ որ և զանձն ետու համ-[բուն:
Առ Բելիսար իմ սպարէն յանձն ըզբանակ,
Ուստի որպէս աջն երկնաւոր եկաց անբաժ՝
Զի եղև նըշան Թէ ինձ պարտ իցէ կալ ⁷:

Արդ աստէն բովանդակի դարձուած բանիս
Առ հարցումըդ առաջին. այլ յաւելուլ
Զիս հանգամանքըն յորդորեն ինչ ինչ կըցորդ.
Որպէս զի տեսցես դու որքան իրաւամբ ¹
Նըշանին ամենասուրբ շարժին ընդդէմ,
Եւ ոմն յինք գրաւէ, և է որ ընդդէմ կայ:
Տես որքան զօրուԹիւն զինքն արժանի
Արար պատուոյ, 'ի Պալլանտեայ մեռանե-[լոյն,
Առ 'ի տալ նըմին ըզքարձ արքայական:
Գիտես կալաւ յԱլպին զիւր բնակուԹիւն
Քան զամս երեք հարիւր՝ մինչև ցայնվայր
Զի ընդ երից երեք մարտեան դեռ ² վաղըն-[իւր:
Գիտես զինչ 'ի Սաբինեանց արար չարեաց
Ցըլուկրետեայ ցաւս առ եօԹամբք Թագաւո-[րօք
ՅաղԹող գըտեալ դրացի ազանց շուրջանակի:
Գիտես զոր ինչ արար՝ 'ի քաջազանց
Կըրեալ Հռովմայ ընդդէմ Բրեննեայ և Պիւ-[ռոսի,
Ընդդէմ այլոց իշխանաց և ժողովոց.
Որով Տորկուատ և Կուինտոս՝ վերաձայնեալն ³
Յանխնամ հերաց, և Դեկեանք և Փաբիոսք
Կալան անուն՝ որք խընկելիքն են ինձ յորդոր:
Ըզգետնեաց նա զխրոխտուԹիւն Արաբացւոց
Որք անցին ըզկնի անցիցն Աննիբալայ
Դ'Ապալերս՝ ուստի վայրէջք քոյին Պադոս:
Ընդ նովաւ պատանեկիկք՝ յաղԹող գըտան
ԸՍկիպիոն և Պոմպէոս. և խիստ ցուցաւ
Առ բըլուրն ընդ որով դու եկիր 'ի ծնունդ ⁴:
Ի ժամուն յոր ապա կամք եղեն երկնից
Համօրէն զաշխարհ ածնել ըստ իւր պայծառ ⁵,
Ըստ կամացըն Հռովմայ բարձ զայն Կեսար:
Եւ զոր արարն 'ի Վարեայ ⁶ մինչ 'ի Հռենոս

ուրոյն պարունակք, յորոց յիւրաքանչիւրոցն ելանել գերծոյր հրեշտակն մի մի Մէն 'ի Ճակատու քերԹողին:

1 Երանուհի՝ առաջնորդ Տանդէի յԱրքայուԹեան, տանի զնա յերկինս Փայլածուի, ուր ժողովեալ են որք սիրեցինն զճշմարիտն և զմշտատև համբաւ անուան. տեսանէն և զկայսրն Յուստինիանոս որ հարցեալ 'ի քերԹողէն համառօտէ զպատմուԹիւն Հռովմէական կայսրուԹեան:

2 Արեգակն որպէս յայտնի է երԹայ յարևելից յարևմուտս. արդ Կոստանդին՝ փոխելով զԳահ իւր 'ի Կ. Պօլիս, տարաւ զարծիւն յարևմտից յարևելս:

3 Էնէաս, արծիւն տարեալ յԷնէասայ՝ գնացեալ էր ընդ արևու յարևելից յարևմուտս, 'ի Տրոյիոյ յԻտալիա:

4 Ի Կ. Պօլիս:

5 Ի Տրոյիոյ:

6 Ցիշէ աստ Յուստինիանոս ԹԷ զիարդ յօրինեաց զՕրինագիրսն յիւր անուն կոչեցեալ, 'ի բիւր մի գրոց ամփոփելով զնոսին միայն 'ի յիսուն գիրս, բառնալով զաւելորդ և զսին օրէնս:

7 Այս է միտք բանիցն՝ այնպէս յայտնի եղև օգնուԹիւն երկնից զի ես համարեցայ իբրև նշան ԹԷ արդարև կամք Աստուծոյ իցեն ԹԷ ինձ պարտ իցէ կալ յարքունիս իմ, զի մի յետս կացից 'ի կարգաւորելոյ զօրէնս: Այս է զոր և փոքր ինչ 'ի վերոյ ՀԷՀ Հաղթ կոչէ:

1 Ընդ հենգն է և այս. և իմանոյ զԳիպելլեանս որ սեպհականեն անձանց զարծիւն՝ զպետուԹիւնն հռովմէական, և զԳուելփիս՝ որք հակառակին այնմ:

2 Իբրև զի ասիցէ ԹԷ այս եղև վերջին փորձն յորում դեռ ևս վերջին անգամ բաղդ երկուց քաղաքացն եկաց 'ի կշիռս:

3 Սա է Կուինտոս Կինկիննատոս:

4 Բլուրս այս է Ֆիեզոլէ որ ապաւէն եղեալ Կատիլինայ՝ կործանեցաւ ըստ մեծի մասին:

5 Այսինքն է՝ մօտ 'ի ժամանակս գալստեան Փրկչին յաշխարհ կամեցան երկինք խաղաղ առնել զաշխարհս, զի 'ի մարդանալն Յիսուսի 'ի դէպ էր, ասէ Տանդէ և յայլ գիրս իւր, զի և երկիր 'ի բարւոք հանգամանս գտանիցի:

6 Վարոն՝ գետ որ բաժանէ զԲրովանս 'ի Լիգուրիոյ: Իզարա և Էրա՝ գետակք Գաղղիոյ: Սոքօք ակնարկէ 'ի շահատակուԹիւնս Կեսարու

digitised by A.R.A.R.@

Իշարա ետեւ ու՝ Էրա, տես և Սեննա,
Եւ ամենայն որով Հռոգան լի է հովիտք։
Զայն զոր արար մինչ գամ մի եղն ՚ի Հռաւեննայ
Եւ վաղեաց ընդ Հռուբիկոն՝ այնպէս եղև
Սլացմամբ՝ զի չհասանէին լեզու կամ գրիչ։
Ի Սպանիա դարձոյց ըզզօրն, յետոյ ուրեմն
Ի Դուրացցոյ և խորտակեաց ըզՓարսալիա
Զայն օրինակ՝ զի և ջերմըն Նիլ ըզցաւն ըզգաց։
ԶԱնտադրոս և զՍիմոյիս ուստի խաղացն
Եռեւս դարձեալ, և ուրանօր հանգչի Հեկտոր.
Եւ Պըտղոմեայ ապա ՚ի վնաս գոռաց անդրէն։
Անդուստ կայծակնացայտ եկն առ Յուբաս.
Ի վերջոյ դարձ արար ՚ի ձերըդ խըրթնին կոյս,
Յականջալուրս եկեալ իւր փող պոմպէական։
Զոր արարն ընդ ծանրակիր հետեւողին [1]
Ի Դըժոխս հաչէ Բրուտոս Կասսիոսիւ,
Եւ Մոդոնա և Պերուգիա ցաւըս կրեցին։
Ընդ որ դեռ լայ Կլէոպատրա ողորմագեցիկ,
Որ ՚ի դիմացըն փախչելով՝ ըզմահ յիժէ
Ճաշակեաց յանակընկալս և դառնալիր։
Ընդ սըմին վարդեցաւ յափըն կարմիր,
Ընդ սըմին այնպէս զաշխարհ եդ յանդորրու՝
Զի առ Յանոս փակեալ եղև իւրըն տաճար։
Սակայն զոր ինչ նըշանն որ տայ ինձ բարբառել՝
Նախ արարեալ և ապա էր առնելի,
Առ մահացու արքայութիւնն որ դ՛ իւրև կայ
Լինի ՚ի տեսանել դոյզն և մըռայլ՝
Թէ ՚ի ձեռն ակնարկեսցի երրորդ կայսեր [2],
Լուսափայլ ակնողէօք և սեռն ՚ի սէր։
Զի կենդանին Արդարութիւն որ ինձ ազդէն
Ընձեռեաց զորմէ խօսիմս [3] իւրով ձեռամբ
Փառըս նըմին՝ խընդրել ըզվրէժ նըր վարչու-
[թեան։
Արդ աստէն ըսքանչացիր յոր երկրորդեմս.
Անդուստ [4] խաղաց ընդ Տիտոսի լընուլ ըզքէն
Վրիժապարտ վաղընջականըն մեղանաց։

՚ի Գաղղիա և ՚ի Գերմանիա. և ՚ի յաջորդ քանի մի տօղս բովանդակէ զյաղթութիւնս նորին ընդ այլ զանազան կողմանս։

1 Հոկտաւիանոս Օգոստոս. սա պարտեալ զԲրուտոս և զԿասսիոս՝ որք յուսաբեկք գնացին զիւրովի, եւ զվերջին հարուածն առ ընկերհաշտութիւն, և հաստատեաց անյեղլի զկայսրութիւն։

2 Առ Տիբեր կայսերբ արծիւն հռովմէական լի եղև փառօք քան զայլ ամենայն ժամանակս։

3 Ձեռամբ Տիբերի եղեւ Արդարութիւնն Աստուծոյ զիւրն վրէժ։ Պոնտոս Պիղատոս կողմնակալ Հրէաստանի յաւուրս Տիբեր կայսեր եթող ՚ի ձեռս Հրէից սպանանել զՅիսուս, և զնոսին հռովմայեցիք պաշտպանք կացին անօրէն սպանմանն, արդ ամենայնիւ ՚ի դէպ էր զի արծիւն հռովմայեցի ՚ի ձեռս Տիբերի լցուսցէ զվրէժն Աստուծոյ վասն արեան աստուածայնին որդւոյ իւրոյ անմեղի։

4 Յետ այսորիկ արծիւն ընթացաւ ընդ Տիտոսի լուծանել զքէն վրիժու մեղացն Հրէից ընդ-

Եւ յորժամ զԵկեղեցի սուրբ խածատեաց
Ատամըն Լոնգոբարդ՝ ընդ իւր թեւովք
Կարոլոս Մեծն յաղթանակեալ հաս յօգնու-
[թիւն։

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ Երգ Զ. 1-95.

## Փառքն Աստուծոյ [1].

Բեռնարդոս ակնարկի առնէր ՚ի ժպիտ
Զի կալայց զակն ՚ի վեր, այլ ես ինձէն
Էի կանխաւ զոր օրինակ և կամէր նա [2].
Զի տեսութիւնս իմ յանապակ փոխարկելով
Եւ նըս մըտանէր ընդ ճառագայթ
Բարձըր լուսոյն՝ որ ինքն յինքեան է ճշմարիտ։
Յայնմ հետէ տեսութիւն իմ մեծագոյն
Քան ըզմեր եղև խօսս, որ և կասի
Առ այդ տեսիլ. և կասին միտք յայդ չափ զեղ-
[ման։
Զոր օրինակ ոք յերազելըն տեսանէ,
Եւ անըրջոյն ըզհետ մընան կիրք տըպաւոր,
Եւ միւսն այլ ՚ի յուշ մըտաց ոչ առնէ դարձ.
Ըստ այսմ եմ ես, զի համօրէն դոգցես բառնի
Տեսիլս իմ, և տակաւին քամի ՚ի ներքս
Ի սըրտիս յիւրմէ ծընեալն անուշութիւն։
Այսպէս ձիւնըն յարեւու լուծանի հալ,
Այսպէս ՚ի հողմն առ տերեւովք թեթեւաթռիչ
Կորընչէր առածանի Սիբիլլային [3]։
Ո՜վ լոյս գերագոյն՝ բարձր այնքանի
Ի մահացու խորհըրդոց, շնորհեա՛ դարձեալ
Իմ մըտաց՝ ՚ի ցուցելոյդ դոյզն յայնմանէ.
Եւ ըզլեզու իմ յարդարեա կարող այնպէս՝
Զի կայծակըն մի միայն ՚ի քոց փառաց
Կարասցէ թողուլ ազանց հանդերձելոց։
Զի ընդ դառնալն ինչ չափաւոր յիմս յիշատակ,
Եւ ընդ հընչել յայսոսիկ տողըս սակաւիկ՝
Եւս առաւել լիցի գիտակ քոյդ յաղթութիւն.
Կարծեմ ինձ ՚ի վերայ կայր դանդաչել
Առ սաստկութեան վառ նըշուլին հանդուրժե-
[լոյս՝
Այն ինչ աչկունքս առ ՚ի նմանէ թէ շըրջէին.
Եւ յիշեմ զի պընդեցայ որխազոր
Այնչափ ընդ այն տեսել բուռել՝ զի յառեցի
Զհայեցուածս ընդ իսկութիւնն անծայրածիր։

դէմ Յիսուսի. մեղաց՝ որ ՚ի կողմանէ Աստուծոյ վրէժ ինն և քաւութիւն լեալ էր հնոյ մեղաց նախահարց մերոց։

1 Ս. Բեռնարդոս ընդունի զխնդրուածս իւր ՚ի Ս. Կուսէն զի Տանդէ կարասցէ յառել զակն յէութիւնն Աստուծոյ, զորմէ ահա խօսի նա։

2 Այսու կամի յայտ առնել զսաստիկ իղձն տեսանելոյ զԱստուած։

3 Կումանեանն Սիբիլլա գրէր զառածս և զբանավճիռս իւր գուշակօրէն ՚ի վերայ տերեւոց ծառոց և դնէր ՚ի բերան անձաւի իւրոյ, ուստի և հողմիկք թեթեւագոյն տարագիր առնէին զայնս։

digitised by A.R.A.R.@

Ո՜վ շընորհք լիալիր դ՚ որ ժըտեցայ
Մըխել զականողիս 'ի լոյսն յաւերժ՝
Որպէս զի յայն ըզտեսութիւնս իմ ըսպառել։
Ի խորս իւր տեսի զի կայ պարածածուկ
Յարակից ընդ սիրոյ 'ի մի զանգուած
Այն՝ որ համատիիւռն է ընդ հանուր.
Զէութիւն և զէզական և զնոցուն բարս
Համօրէն միահամեալ յայն օրինակ՝
Զի զոր կամըս բարբառել սին է նըշոյլ։
Ըզհանրական կերպարանս այսըր կապոյ
Տեսի կարծեմ՝ քանզի յանձին ես յորդալիր
Իմանամ զըւարճութիւն յասել իմ զայս։
Կէտ մի միայն՝ մեծ ես է ինձ մոռացութիւն [1]
Քան թէ դարք քըսան և հինգ ընդ այն ձեռնարկ
Որ 'ի զարմանս ած ըզՊոսիդ դ՚ Արգեայն ըստուեր։
Ա՛յսպէս միտք իմ բովանդակ յակճիռս 'ի կախ
Աներեր ակընկառոյց պըշնոյր ուշիւ՝
Եւ ընդ պըշնուլըն հանապազ արծարծանէր.
Առ լուսովն՝ եղանիլ է իմն այնպէս՝
Զի դառնալ 'ի նըմանէ 'ի տեսիլ այլ
Ցանհընարիցն է հաճեսցի թէ ոք երբէք։
Քանզի բարին՝ որ կամաց է նըպատակ,
Բովանդակի համբուռն 'ի նմա, և՛ ի դուրս յայնմէ
Թերակատար է՝ որ յայնմիկն է կատարեալ։
Աստուստ [2] հակիրճ եղս լիցի իմս տոացուած՝
Եւ զոր յիշեմն իսկ այնու, քան ըզմանկան
Որ թացյէ դեռ ըզլեզու իւր առ ըստին.
Ոչ զի պատկեր աւելի քան ըզմին պարզ
Գուցէ 'ի լոյսըն կենդանի յոր պըշնուի,
Զի է ցանկ զինչ պէս և էրն յառաջնըմէ.
Այլ առ տեսոյս որ 'ի յիս կարողանայր
Հայելով իմ՝ միայնակ մին կերպարան
Ընդ փոխելս՝ այլակերպէր ինքնին 'ի յիս [1]։
Ի խորին և յանըստուեր լինելութեան
Վեհ լուսոյն՝ յայտնեցան ինձ պարոյրք երեք
Եռագդի գունապէղեալք և 'ի մի չափ.
Եւ մ՚ի միւսոյն՝ որպէս Այեղն յԱյեղանէ
Ծառագայթեալ, և երրորդն հուր երևէր՝
Որ հաւասար աստի և՛ անտի ելանիցէ։
Ո՛հ, որպէս թերատ են բանք և ապիկար
Առ խորհուրդս իմ. և այս առ այն զոր տեսի ես
Այնպէս է՝ զի և չէ բաւ ասել սակաւ [2].
Ո՜վ լոյս յաւերժ որ հանգչիս միայն 'ի քեզ,
Միայն իմանիս, և առ 'ի քէն իմանալի
Եւ իմացեալ՝ սիրես ըզքեզ ու՛նդ քեզ հաճիս [3].
Այն պարոյր որ յարակից ծագումն առեալ
Թըւէր 'ի քէն՝ որպէս ըզլոյս արփիափայլ,
Վայրիկ մի յաչաց իմոց պարահայեաց
Ներքոյ ինքեան՝ յերփըն գունոյն իւր իսկաբուռն,
Թըւեցաւ ինձ նըկարէն 'ի մեր պատկեր՝
Վասն որոյ աչքս համայն 'ի նոյն էին յառեալք։
Զոր օրինակ երկրաչափ յառեալ բնաւին
Զափել ըզբոլորակ և չըգտանէ
Ի խորհիլ զառաջանիւթն ում կարօտի.
Սոյնպէս էի ես յայն տեսիլ նորանորոգ.
Կամէի տեսանել իւ եկն 'ի ձոյլ
Պատկերն առ պարունակ՝ և իւ կայ անդ.
Այլ չէին առ այսքանիս փետուրցըս թռիչք.
Սակայն միտք իմ սարսեցաւ փայլատակմամբ,
Որով 'ի լըրումն եկըն կամացն իւր անձկութիւն։
Ի վեհ տեսիլ մըտաց աստէն պակասեաց ոյժ.
Այլ արդէն հոլովէր զկիրս և ըզկամս՝
Որպէս զանիւ որ 'ի հիւ դայ սահաւասար,
Սէրըն շարժող Արեգական և այլ աստեղց։

ԱՐՔ. ԵՐԳ ԼԳ. 49-145.

1 Կէտ մի միայն անցելոյ ժամանակին յետ երջանիկ տեսլեանս իմոյ պատճառէ ինձ (առ այն զոր տեսի ես յԱստուած) ընդարմացումն և մոռացութիւն առաւել՝ քան որչափ չեցեն պատճառեալ քսան և հինգ դարք վչանգամանաց և զմանրամասանց արշաւանացն Նաւորդաց՝ որք գնացին 'ի Կողքիս 'ի խնդիր ոսկեգեղման 'ի վերայ Արգոս նաւու, որ լինելով առաջին 'ի սփռել զստուեր իւր 'ի վերայ երեսաց ալեաց՝ 'ի զարմանս կրթեաց ըստ առասպելին զաստուածն ծովուց զՊոսիդոն։

2 Աստի յառաջ վասն ունելոյս դոյզն ինչ 'ի յուշիս՝ ասացուած բանիցս լիցի ես կրճատ քան, և այլն։

1 Աչք իմ զօրացեալ ընդ տեսանելն 'ի նմա մի միայն կերպարան՝ այն ինքն է զմի և նոյն, այլափոխեալ լինէր՝ 'ի լաւագոյն փոխել տեսողական կարողութեան աչացս։ Համառօտ ասել՝ ոչ փոխէր, աւէ, Աստուած, այլ զօրութիւն իմ 'ի տեսանելն։

2 Այս է՝ բառս սոյա ոչ է բաւական առ միտս նուազութեան ասացելոցս։

3 Յայսմսիկ երեսին տողս աստուածաբանօրէն վարդապետեալ է խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան։

Թարգմ. Հ. Գ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ։

digitised by A.R.A.R.@